[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
27	Մայիս	2019 թ.		Բ	7982339998
[4] Առաքման ամսաթիվ					
27	Մայիս	2019 թ.			

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7	
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	6	9	0	2	0	8	7	/ 1

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի									
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3	
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը									

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[20] Լրացուցիչ տվյալներ		

[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը			
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Ակցիզ, բացառյալ հարկի գումար	Ակցիզ, ներառյալ հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 23154618 ք/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093

(անունը, ազգանունը)

Ստացող

(անունը, ազգանունը)

27/05/2019 09:25:28

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

01 մարտի 2019թ. ք. Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ն.Մ.Գարեգինյանս, քննարկելով թիվ 23154618 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ-ի դեկտեմբերի 2-ին ՇՄ Քարաբերդ գյուղի բնակիչ Սուրեն Միհրանի Սարգսյանը ոստիկանության Անիի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2018թ-ի դեկտեմբերի 1-ին ժամը՝ 23:00-ից մինչև դեկտեմբերի 2-ը՝ ժամը 06:30-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը, կոտրելով իրեն պատկանող անասնագոմի դռան փականը, մուտք է գործել անասնագոմ և այնտեղից գողացել թվով 5 հատ հորթեր, որոնցից մեկը հայտնաբերվել է անասնագոմից մետ 50 մետր հեռավորության վրա, պատճառելով մոտ 600.000 ՀՀ դրամի վնաս:

Նույն օրը ոստիկանության Անիի բաժնի պետի օ/գ տեղակալ ոստիկանության մայոր Ս. Զատիկյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ ձեռնարկված համապատասխան միջոցառումներով պարզվել է, որ անասնագոմից 4.5 կիլոմետր հեռավորության վրա հայտնաբերվել է «Գազել» մակնիշի 34 ՄՄ 272 հ/հ-ի ավտոմեքենան, որի բեռնախցիկում հայտնաբերվել են 4 գլուխ հորթեր: ՇՄ Քարաբերդ գյուղի բնակիչ՝ Սուրեն Սարգսյանին ներկայացվել ենհայտնաբերված հորթերը, վերջինս ճանաչել է դրանք և հայտարարել, որ նշված հորթերը պատկանում են իրեն:

2018թ. դեկտեմբերի 2-ին՝ ժամը 13:30-ին, գողություն կատարելու կասկածանքով ՇՄ Մարալիկ քաղաքից ոստիկանության Անիի բաժին է բերման ենթարկվել Գյումրի քաղաքի բնակիչ՝ Հովհաննես Ալբերիտի Մանուկյանը, ով տվել է խոստովանական բացատրություն, որ նշված գողությունը կատարել է ինքը:

Դեպքի առթիվ 2018 թվականի դեկտեմբերի 2 -ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդհոդվածի 2-րդմասի2-րդ և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 23154618 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:

Սուրեն Միհրանի Սարգսյանը տուժողի դատավարական կարգավիճակում ցուցմունք է տվել այն մասին, որ 2018 թ.-ի դեկտեմբերի 2-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում, գալով անասնագոմ տեսել է, որ անասնագոմի դռան կախովի փականը բաց է և մտնելով անասնագոմ փորձել է վառել լույսը, տեսել է լույս չկա, հետո վառել է գրպանիս կրակայրիչը ու ման գալով անասնագոմում տեսել, որ մեկ հատ ձեռնոց է ընկած գետնին, հետո տեսել, որ թվով 5 հատ հորթեր չկան, որից հետո դուրս է եկել անասնագոմից ման եկել շենքի շուրջ բոլորը ու կրակայրիչի լույսը վառելով գտել է իր հերթերից մեկին՝ պարանոցին հակի թել

փաթաթած: Մնացած 4 հատ հորթերին չգտնելով զանգահարել է ոստիկանություն ու հայտնե կատարված գողության մասին:

Հովհաննես Ալբերտի Մանուկյանը 2018թվականի դեկտեմբերի 2-ին կասկածյալ դատավարական կարգավիճակում խոստովանական ցուցմունքն է տվել:

07.12.2018թվականին Հովհաննես Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ուրիշի խոշոր չափերի գույքի գաղտնի հափշտակություն կատարելո դիտավորությամբ, 2018 թվականի դեկտեմբերի 2-ին՝ ժամը 05:00-ի սահմաններում, իր անձնական օգտագործման ,,Գազել,, մակնիշի, 34 ՄՄ 272 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով գնացել է Շիրակի մարզի Քարաբերդ, որտեղ մուտքի դռան կախով փականը բացելու եղանակով ապօրինի մուտք է գործել նույն գյուղի բնակիչ Սուրեն Միհրանի Սարգսյանի անասնագոմ և այնտեղից դուրս հանել թվով հինգ գլուխ հորթեր, որոնցից մեկ գլուխ հորթը չկարողանալով պահել՝ բաց է թողել, իսկ խոշոր չափերի՝ ընդհանուր 600.000 դրամ արժողության 4 գլուխ հորթերը բեռնել է ,,Գազել,, մակնիշի ավտոմեքենայի բեռնախցիկն ու դաշտամիջան ճանապարհներով ուղևորվել է դեպի Արագածոտնի մարզի ուղղությամբ: Ճանապարհին ավտոմեքենան ընկել է ցեխերի մեջ, չի կարողացել դուրս բերե այն, որից հետո 4 գլուխ հորթերն ավտոմեքենայի մեջ բեռնված թողնելով՝ դիմել ել փախուստի: Վերջինս իրեն ամբողջությամբ մեղավոր է ճանաչել և զղջացել է կատարած հանցագործության համար:

Քրեական գործի նախաքննության ընթացքում նշանակվել են դատակենդանաբանական, դատաապրանքագիտական համալիր, դատահետքաբանական և մատնադրոշմային փորձաքննություններ, որոնց եզրակացությունները ստացվել են և ծանոթացվել կողմերին:

2019թվականի հունվարի 15-ին մեղադրյալ Հովհաննես Մանուկյանը հրավիրվել է Արթիկի և Անիի քննչական բաժին լրացուցիչ հարցաքննության, սակայն վերջինս ներկայանալով հայտարարել է, որ նախկինում մոռացել է հայտնել, որ 2007թվականից հաշվառված է «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժական դիսպանսերում և ունի հոգեկան խնդիրներ:

Նույն օրը հարցում է կատարվել «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերություն վերոնշված հանգամանքը պարզելու համար, որի պատասխանը ստացվել է 2019 թվականի հունվարի 29-ին և ըստ ստացված տեղեկանքի Հովհաննես Մանուկյանը 06.10.2007թ-ից հաշվառման մեջ է գտնվում ,,Փսիխոպատիա գրգռված շրջանի,, ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու համար պահանջվում են դատահոգեբանական և դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ. 244-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 23154618 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց

նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ մեղադրյալ՝ Հովհաննես Մանուկյանը հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/եթե Հովհաննես Մանուկյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/ Հովհաննես Մանուկյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/եթե Հովհաննես Մանուկյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ Հովհաննես Մանուկյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ Հովհաննես Մանուկյանը հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը:

3. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինեն քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Թիվ 23154618 քրեական գործի նյութերը փորձագետին կտրամադրվի լրացուցիչ:

Քննիչ **Ն.Մ. Գարեգինյան**